

Տարբերակ 1

1. Որո՞նք են Գրիգոր Զոհրապի ծննդյան ու մահվան տարեթվերը:

ա) 1854-1908 բ) 1869- 1923 գ) 1861-1915 դ) 1875-1957

0.5 միավոր

2. Դուրս գրել Ավ. Իսահակյանի ստեղծագործությունները:

<<Տաղարան>>, <<Երգեր ու վերքեր>>, <<Թմկաբերդի առունը>>,
<<Հայրենիքիս հետ>>, <<Աբու-Լալա Մահարի>>, <<Մի մրահոն աղջիկ
տեսա>> , <<Այրին>> , <<Լիլիթ>>, <<Ես իմ անուշ Հայաստանի>>, <<Ռավեննայում>>:

3.

0.5 միավոր

3. Նշվածներից ո՞րն է նորավեպ:

ա) <<Այրին>>

գ) << Հավերժական սերը>>

բ) <<Լիլիթ>>

դ) <<Արտիստը>>.

0.5 միավոր

4. Ո՞ր հատկանիշը բնորոշ է քառյակին:

ա/ Քառյակը արևելքի միջնադարյան քնարերգության մեջ կոչվել է ռուբայի:

բ/ Քառատողը և քառյակը ավարտուն բանաստեղծություններ են:

գ/ Հայ ժողովրդական բանահյուսության մեջ քառյակը կոչվել է խաղիկ, հայրեն:

դ/ Քառյակը կազմված է չորս տողից և ունի ավարտուն միտք:

0.5 միավոր

5. Գրել , թե ո՞ր պնդումներն են ճիշտ /նշել համարները/:

ա/ <<Ցեղին սիրտը>> լույս է տեսել 1921 թվականին:

բ/ <<Այրին >> նովելի հերոսը՝ Մարտիրոսը, չի վերադառնում հայրենի տուն:

գ/ Հովհ. Թումանյանը ծնվել է Լոռու Դսեղ գյուղում:

դ/ Ավ. Իսահակյանի գրել է <<Ալագյազի մանիներ>> շարքը:

2 միավոր

6. Գրել հեղինակի անունը և ստեղծագործության վերնագիրը:

ա/ սկսվում է <<Նախերգանքով>> , որտեղ փառաբանվում է անմահ գործի գաղափարը:

բ/.... ստեղծագործության գլխավոր հերոսը Մարտիրոսը, ամուսնությունից հետո մեկնում է Պոլիս փոխարինելու հորեղբորը:

գ/ Ռիալտոյի կամուրջին տեղի ունեցած հանդիպումը քնարական հերոսին հիշեցնում է պատանեկան սերը:

դ/... ստեղծագործությունը ավարտվում է ,,Ծնվում ենք ականա, ապրում ենք զարմացած ,մեռնում ենք կարոտով ,, նախադասությամբ:

2միավոր

7.Ավարտիր բանաստեղծությունը:

Ինչքան ցավ եմ տեսել ես,

1միավոր

8.Պատկերավորման ի՞նչ միջոց է օգտագործված:

Երբ հանգչում են ապարանքի ջահերը,

Եվ արծաթյա կարապի պես լուսնկան

Փայփայում է ավազանի ջրերը,

Շշնջում է սյուրի նման էլ-Սաման:

Պատասխան _____ -

0.5միավոր

9.Գրիր հոմանիշները:

Հորդ-----, բամբիշ -----, շիջել-----, հանց-----

1միավոր

10.Նշված հեղինակներից ո՞վ է սովորել Գենտի համալսարանում:

ա/Պ.Դուրյան բ/ Ղ. Վարուժան գ/ Ավ. Իսահակյան դ/ Հովհ. Թումանյան
0.5միավոր

11.3-4 նախադասությամբ ներկայացրու՝ «Այրին» նովելը:

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՇԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ 8-րդ դաս.

ՏԱՐԲԵՐԱԿ 2

1.Որո՞նք են Ավ. Իսահակյանի ծննդյան և մահվան տարեթվերը:

ա/ 1884-1915 բ/ 1835-1888 գ/ 1875-1957 դ/ 1861-1915

0.5միավոր

2.Նշվածներից որո՞նք են պատկանում Թումանյանի գրչին:

«Հայրենիքիս հետ», «Անուշ», «Մի մրահոն աղջիկ տեսա», «Այրին», «Թմկաբերդի առունը», «Արտիստը», «Ձոն», «Փարվանա», «Սասունցի Դավիթ», «Լիլիթ»:

0.5 միավոր

3.Նշվածներից ո՞րը պատկերավորման միջոց չէ:

ա/ այլաբանություն բ/ մակդիր գ/ փոխաբերություն դ/ չափազանցություն

0.5միավոր

4.Ո՞ր հատկանիշը բնորոշ չէ պոեմին:

ա/ Պոեմները լինում են պատմողական, քնարական, քնարապատմողական:

բ/ Պոեմը և բալլադը կարող են ունենալ ոչ իրական հիմք:

գ/ Պոեմը չափածո ամենախոշոր գրական տեսակն է:

դ/ Քնարական պոեմներն ունեն հերոս, դիպաշար և գործողություն:

0.5միավոր

5.Գրել, թե ո՞ր պնդումներն են ճիշտ /նշել միայն համարները/:

ա/ Գ.Զոհրապի «Այրին»նորավեպի հերոսը ամուսնանում է սպասուհու հետ և վերադառնում գյուղ:

բ/Ավ. Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա » բանաստեղծությունը և Հովհ. Թումանյանի «Փարվանա»բալլադը սիրո մասին են:

գ/Դավաճանությամբ բերդը գրաված շահը խորհում է աշխարհի մասին, որտեղ ոչինչ հաստատ չէ:

դ/Փարվանա արքայի դստեր արցունքներից գոյացած լիճը ծածկում է արքայի պալատը:

2միավոր

6 .Գրել հեղինակի անունը և ստեղծագործության վերնագիրը:

:

ա/Կխորտակեմ կամարները երկնային, Ես չեմ թողնի ,ես չեմ թողնի դու մեռնիս:
բ/.... Մարտիրոսը մոռանում է ընտանիքը անուսնանալով սպասուհու հետ:
գ/... Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն:
դ/... Ուր է ,հայրիկ, երբ կգա նա Սարից իջած ձիավոր:

ա/ _____
բ/ _____
գ/ _____
դ/ _____ 2միավոր _____
_____ —

7.Ավարտել բանաստեղծությունը:

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,

1միավոր

8.Պատկերավորման ի՞նչ միջոց է օգտագործված:

Նա մեռնում է ,ինչպես ցողը բողբոջում Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ
մայրական: _____ 0.5միավոր

9.Գրի՛ր տրված բառերի հոմանիշները:

ա/ գուղձ _____ բ/անշեջ _____ գ/ծյունաթույր _____ քղանցք _____
1միավոր

10.Նշված գրողներից ո՞վ չի ապրել Թիֆլիսում:

ա/ Շիրվանզադե բ/ Նար-Ռոս գ/ Ջոհրապ դ/ Սունդուկյան
Պատասխան՝ _____ 0.5միավոր

11.Ներկայացրու՝ «Հավերժական սերը» լեգենդը 3 -4 նախադասությամբ:

1միավոր

Տարբերակ 3

1. Նշիր Հովհ. Թումանյանի ծննդյան և մահվան թվականները:

ա/ 1884-1915 բ/1835-1888 գ/ 1869-1923 դ/ 1914-1984

0.5 միավոր

2. Ընդգծիր Վարուժանի ստեղծագործությունները:

«Այրին», «Ցեղին սիրտը», «Նավասարդյան», «Ձոն», «Հավերժական սերը», «Ցորյանի ծովեր», «Տրտունջք», «Սիրերգ», «Հեթանոս երգեր», «Ես և նա»:

0.5 միավոր

3. Նշվածներից ո՞րն է պոեմ:

ա/ «Ձոն» բ/ «Այրին» գ/ «Փարվանա» դ/ «Թմկաբերդի առումը»

0.5 միավոր

4. Ո՞ր հատկանիշն է բնորոշ քառյակին:

ա/ Քառյակը և քառատողը ամբողջական բանաստեղծություններ են:

բ/ Քառյակ գրել է միայն Հովհ. Թումանյանը:

գ/ Քառյակները լինում են նաև արձակ:

դ/ Միջնադարում ստեղծված քառյակները կոչվել են հայրեն:

0.5 միավոր

5. Դ. Վարուժանի ստեղծագործության վերաբերյալ ո՞ր պնդումներն են սխալ:

ա / «Սարսուռներ» ժողովածուն լույս է տեսել 1906 թվականին:

բ/ «Ցեղին սիրտը» ժողովածուն լույս է տեսել Վարուժանի կնոջ շնորհիվ 1921 թվականին:

գ/ «Ձոն» բանաստեղծությունը կազմված է 4 վեցնյակներից:

դ/ Վարուժանի իսկական ազգանունն է Չպուգքյարյան :

2 միավոր

6. Գրել հեղինակի անունը և ստեղծագործության վերնագիրը:

ա/ Ջարդարը մինչև վերջ էլ սպասում է ամուսնուն:

բ/ ... անձնագրի կտրիճները հավերժ որոնում են անշեջ հուրը և այրվում այդ որոնումների ճանապարհին:

գ/ ... պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած:

դ/ ... Մի մրահոն կույս էր քեզ պես , կոտրեց սիրտս պատանի:

2միավոր

7.Ավարտել բանաստեղծությունը:

Աչքս դիպավ աչքի բոցին,

1.5 միավոր

8.Պատկերավորման ի՞նչ միջոց է օգտագործված:

Անապատը դեղին քղանցքն է փռել ԵՎ ծածկել է ապարանքը Թաղմորի:

9. Գրի՛ր հոմանիշները:

ա/ալյակ _____ բ/ վաղորդյան _____ գ/ տատրակ _____

դ/ ձոն _____

1միավոր

10. Գրական ո՞ր մեթոդի հիմնադիրն է Ջոհրապը:

ա/ ռեալիզմ բ/ ռոմանտիզմ գ/ կլասիցիզմ

0.5միավոր

11.Ներկայացնել «Մի մրահոն աղջիկ տեսա» բանաստեղծությունը 3-4 նախադասությամբ:

1միավոր

ԿԻՍԱՄՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԻՉ ՀԱՐՑԱՇԱՐ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ / 8-րդ դաս/

ՏԱՐԲԵՐԱԿ 4

1. Որո՞նք են Դ. Վարուժանի ծննդյան և մահվան թվականները:

ա/ 1854- 1908 բ/ 1884- 19175 գ/ 1861-1915 դ/ 1869-1923

0.5միավոր

2. Որո՞նք են Գ.Զոհրապի ստեղծագործությունները / ընդգծի՛ր/:

«Կյանքը ինչպես որ է», «Ճիտին պարտքը», «Ձոն», «Լուռ ցավեր», «Անհետացած սերունդ մը», «Սաադիի վերջին գարունը», «Այրին», «Մի մրահոն աղջիկ տեսա...», «Արտիստը»:

0.5միավոր

3. Նշվածներից ո՞րն է բանաստեղծություն:

ա/ «Փարվանա» բ/ «Այրին» գ/ «Ձոն» դ/ «Թմկաբերդի առունը» 0.5միավոր

4. Ո՞ր հատկանիշը բնորոշ չէ բալլադին:

ա/ Բալլադը չափածո խոսքի տեսակ է:

բ/ Բալլադը ժամանակին թարգմանվել է պարբերություն բառով:

գ/ «Թագավորն ու չարչին» բալլադը գրել է Թումանյանը:

դ/ «Թմկաբերդի առունը » և «Փարվանա -ն բալլադ են:

0.5միավոր

5. Գրել, թե ո՞ր պնդումներն են ճիշտ /նշել միայն համարները/:

ա/ Գ.Զոհրապի «Այրին»նորավեպի հերոսը ամուսնանում է սպասուհու հետ և վերադառնում գյուղ:

բ/ Ավ. Իսահակյանի «Մի մրահոն աղջիկ տեսա » բանաստեղծությունը և Հովհ. Թումանյանի «Փարվանա»բալլադը սիրո մասին են:

գ/Ղավաճանությամբ բերող գրաված շահը խորհում է աշխարհի մասին, որտեղ ոչինչ հաստատ չէ:

դ/Փարվանա արքայի դստեր արցունքներից գոյացած լիճը ծածկում է արքայի պալատը:

_____ 2միավոր

6.Գրի՛ր հեղինակի և ստեղծագործության վերնագիրը:

ա/Կխորտակեմ կամարները երկնային, Ես չեմ թողնի ,ես չեմ թողնի դու մեռնիս:
բ/.... Մարտիրոսը մոռանում է ընտանիքը և ամուսնանալով սպասուհու հետ:

գ/... Ան ծլած էր մոխրի մեջ իբրև կնյուն:

դ/... ՈՒ՞ր է ,հայրի՛կ, Ե՞րբ կգանա Սարից իջած ձիավոր:

ա/ _____

բ/ _____

գ/ _____

դ/ _____ 2միավոր

—

7.Ավարտի՛ր բանաստեղծությունը:

Ո՛ր պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,

_____ 1միավոր

8.Պատկերավորման ինչ միջոց է

Որ դարձրին քեզ սև ու սուգի մի հովիտ Խեղժ ու լալկան քո երգերով ,
հայացքներով անժպիտ:

Պատասխան՝ _____

9.Գրի՛ր հոմանիշները:

ա/ սեգ _____ բ/մղկտալ _____ Գ/քղանցք _____ դ/բամբիշ _____

1միավոր

10.Նշվածներից ո՞ր հեղինակն է եղել պատգամավոր, իրավաբան:

ա/ Թումանյան բ/ Զոհրապ գ/ Վարուժան դ/ Մեծարենց 0.5միավոր

11. Ներկայացրու՝ «Ցորյանի ծովեր»բանաստեղծությունը 3-4 նախադասությամբ :

